չեալ ձեւ մը և հաստատութիւն կ՚առնուին։ փոխ առ փոխ բաղմաներգութիւնք և եօթն ժամք որ ըստ օրեայ կանոնական մաղթանաց, ի միայնանոցաց կ՚անցնէին ի մայր եկեղեցիս Անտիոքայ, Աղեքսանդրիոյ և Կոստանդնուպոլսի, ապա ի Մեդիոլան՝ Սրբոյն Ամբրոսիոսի ձեռքով, և յետոյ ի Հռոմ՝ Դամասոս քահանայապետին օրովը, որ Հռովմայ և արեւմտեան քրիստոնէութեան համար եղաւ ինչ որ էին արեւելքի համար Աթանաս, Բասիլիոս և Ոսկեբերան, օրէնսդիրք եկեղեցական կարգաց և պաշտամանց. և ինչ որ մերքն Սահակ և Մեսրովբ ի Հայաստան եկեղեցւոյ ի նմին դարու։

Տարայարեցի

# Ի ՏՕՆԻ

## ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ

**Շարականիս սկզբնատառերէն յայտնի է թէ Յովհաննէս արքայի խնդրանօք է գրուած. Յովհաննէս արքային ժամօք է ազգային բանասիրաց. իսկ շարականիս գրողն անծանօթ է, վասն զի հինգ գրչագրաց մէջ ևս գրողին անունը կը պակսէր, թէպէտ գրութեան ոճը և ժամանակը յայտնի կ՚ընեն զինքը։**

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԴԿ

Յերիս անձինս բաժանեալ և մի բնութիւն ոչ պատեալ. Երրորդութիւն պաշտելի, Հայր և Որդի և Սուրբ Հոգի. երրեակ և մի աստուածութիւն բոլոր սրբոց օրհներգութիւն։

Որ Հայրդ առ հարսն յայտնեալ, ի մարգարէս քարոզեալ. Որդիդ եկեալ մարմնացար, տնօրէնութեամբ ծնունցար. ի վերնատունն իջեալ Ոգիդ, և կնքեցեր զթիւ երրակիդ։

Հայր զքեզ ստեղծիչ յայտնելով, հատիչ Բանիւդ և Ոգւով. Որդիդ զՀայր քարոզեալ և զՈգին սուրբ խոստացեալ. հաստատեցեր Ոգիդ իջեալ զԵրրորդութիւնդ կատարեալ։

Այսօր մարդիկ սրբաբանեն զքեզ, զոր արամբէք վերերգեն. երիցդ երրեակ սուրբ և մի տէր, զքեզ եռանձնեայ մի բնութիւն։

Նորոց որդւոց Աբրահամու հօգւոյ խաղ եկեղեցւոյ, զերիս անձինս ընդունելով, մի տէր ձայնէ հաւատով։

Նախնեաց երից նահապետացն, երիցս Աստուած կոչեցար զերրեակ անձինս որդւոց նոցին ցուցեր, զոր ազդեալ Նախկին։

Երրորդական լոյս անսկզբնական երրեակ լուսով լցեր զաշխարհս ամենայն, զոր ի սկզբանն երից աւուրցն աննիւթ լուսովք ցուցեր զխաւարն անդնդոց զկուռն հերքեցեր։

Սկզբան էից երիս ցուցար գործակից. զՀայրդ յայտնեալ Աստուած առնող երկնի և երկրի. առաց Աստուած զԲանդ և զՈրդի. և ի վերայ Ջուրց շրջեալ սուրբ զՈգի։

Որ արարցուք ձայնիւ յոգնական՝ յառնել մարդոյն ցուցեր զանձինս երրական, ի նմին պատկեր զբնութիւնդ յայտնեալ միական, նոյն պատկերակից և միշտ գործակից։

Բամեալ ընդ զօրս երկնաւորաց բնակիչք երկրի ի յՈգւոյդ շնորհաց. Երրորդութեանդ երկրպագելով, միայն Աստուած դաւանելով զՀայր և զՈրդի, սրբովդ Ոգւով. ամենայն սրբոց հայցմամբ խնայեա ի մեզ սուրբ Երրորդութիւն։

Երրորդական մի տէրութիւն միաւորական սուրբ Երրորդութիւն. յերիս անձինս և մի բնութիւն. յերիս դէմս մի աստուածութիւն. մի կամք և մի ներգործութիւն անսկիզբն անման մի փառակցութիւն. ամենայն սրբոց եայլն։

Բախճապէս զունդքն լրման, բոլոր սրբոց

digitised by A.R.A.R.@

ժողովք ամենայն, օրհնաբանեն զՀայրդ ան֊պատճառ, զՈրդիդ ծնունդ առ ի Հօրէ, զՈգիդ բղխումն առ ի նոցունցն յէութէնէ. ամենայն սրբոց Եւայլն :

ՀԱՐՑ ԳԿ

Անսկիզբն լոյս սկզբնական ստեղծիչ աս֊տուածութիւն. միասնական անճառ Երրորդու֊թիւն, համագոյ և զոյգ մի տէրութիւն. զքեզ օրհնեմք Աստուած հարցն մերոց :

Բաբունեաց պատմիչ զանազան անձինս և մի բնութիւն. արար Աստուած զմարդն յիւր պատկեր, ասէ, յԱստուծոյն պատկեր արար զնա. զքեզ օրհնեմք :

Քարոզեալ բնաւից՝ նախնական ստեղծման նոյն գործակից. նորոգութեան աւազանին ծննդեան կատարող անունդ Երրորդութեան. զքեզ օրհնեմք :

ԶՏէր օրհնեցէք, բարձր արարէք զնա յա֊ւիտեան :

Առ մեզ Հայր առաքեաց զՈրդին, որ ե֊կեալ փրկեաց, Ոգին տնօրինեաց. բարձր ա֊րարէք :

Ցերրեակ լուսոյն ծագմանէն, զերծաք ի լոյս յոգւոց խաւարէն, ծնեալք յաւազանէն. բարձր արար :

Նոր իսրայէլ նորոգեալ, Երրորդութեամբն սրբեալ, բոլոր սուրբ ընտրեալք. բարձր արարէք :

ՈՂՈՐՄԵԱ ԴՁ

Խորհրդաբար ի գիրս Մովսէս, զզանազան անձինս Երրորդութեանն գուշակեաց. իջցուք և զլեզուսն խառնակեսցուք. և տեղեաց Տէր հուր ի տեառնէ և իսրայէլ լուիցէ զի Տէր Աստուած քո տէր մի է. աղաչեմք ամենայն սրբոց հայցմամբ, խնայեա ի մեզ սուրբ Եր֊րորդութիւն :

Նոյն զքեզ երրեակ մի պաշտելի՝ երիս աւուրս, ասէր, երթալ պաշտել յանապատի. զՀայր որ յերկրէ զհովիւն հօտի հանէր ի մեռելոց զՈրդի. Եսայիաս ձայնէր զգնօղդ ի նոսին յանապատին զսուրբ Հոգին. աղաչեմք :

Դաւիթ լնուլ ողորմութեամբ տեառն զեր֊կիր՝ ասէր զՀօրէդ. բանիւ տեառն երկինք՝ զՈրդւոյդ յայտ առնէր. և բերանոյդ ոգւով լի֊նել զօրաց երկնից՝ զսրբոյ Ոգւոյդ. աղաչեմք :

ՏԷՐ ՅԵՐԿՆԻՑ

Բամից դասուց սերովբէից այսօր հաղորդ սրբասացութեամբ. սուրբ սուրբ գոչեմք, սուրբ տէր Սաբաօթ, զերեքանձնեայ մի տէրութիւնդ որպէս յերկինս՝ այսօր յերկրի սրբաբանելով զՀայր և զՈրդի և զսուրբ Ոգիդ այսօր օրհ֊նեմք ընդ սուրբս ամենայն :

Երրորդութեանդ երկրպագեալ խոստովանի եկեղեցի սուրբ հաւատացեալ. զՀայրդ անծին անսկիզբն անպատճառ. պատճառ անճառ ծննդեան Որդւոյդ անժամանակ. և անըս֊պառ բղխման սուրբ Ոգւոյդ. զՀայր և :

Առ ի հօրէ զՈրդիդ ծնեալ, բան միածին լոյս փառաց ծագեալ, զՈգիդ ելումն ի Հօրէդ բղխեալ, և ի յՈրդւոյդ նոյն առաքեալ. զՈրդիդ միայն զոլ Հօր Որդի, և զՈգիդ Հօր և Որդւոյ Աս֊տուծոյ Ոգի, ի Հօրէ ելեալ անճառապէս և երևեալ յՈրդւոյ անթարգմանապէս :

Ցուցար երրեակ կենդանարար, յոր նորած֊նեալ փրկիմք կենդանաստեղծեալ, երեք փըշ֊մամբն առ Եղիայի և երրակի պարսիւ Դաւթի. որ ասէիր առ Անգէի, ես Տէր և Բանն իմ և Ոգի որ կամ ի միջի. յԵրրորդութենէդ սրբեալ երից դասուց՝ առաքելոց մարգարէից և վարդապետաց հայցմամբ խնայեա ի մեզ :

Երրորդութեանն հարսնացեալ, աստուա֊ծածին ի Հօրէ ընտրեալ, ի քէն Որդին միա֊ծին ծնաւ, քեզ սուրբ Ոգին հովանացաւ. զոր առաքեալք քարոզեցին զքեզ, մարգարէք կոյս գուշակեցին. որոց վկայիցն արեամբ և միան֊ձանցն ճգնութեամբ և կուսանաց գնդիւ մաղ֊թեա վասն մեր :

digitised by A.R.A.R.@